զանդուիեան բերելու ընդհանրական կաթուղիկոսին կամ Բաջբերունեաց և Բզնունեաց կողմերի ժողովրդին Աղթամարցիների նզովքից ժողովով ազատելու իրողութիւնը, մի նախապատրաստութիւն էր միութեան մտքին։ Թովման յիշում է այս դէպքը ոչ միայն իւր պատմութեան, այլ և յաճախ վկայութեան բերուած ՊԾԹ յիշատակարանի մէջ, համարելով այն Յեսու Նաւեայի Աւետեաց երկիրը առաջնորդելու նման մի գործողութիւն*։ Այսպէս, ուրեմն, Թովման հայրապետական Աթոռի միութեան ջերմ կուսակից էր դեռ ևս 1410 թուից։ Նշանակալից է, որ միութեան գլուխ են կանգնում և 1441 թուի ժողովի դեկավար հանդիսանում նոյն Տաթևացու երկու աշակերտները՝ Հերմոնի վանքի նշանաւոր վարժապետ Յովհաննէս Կոլոտիկ և Թովմա Մեծոփեցին։ Այդ գաղափարը կոուել էր ու կոփուել Գրիգոր Տաթևացու դպրոցից ճիւղաւորուած ԺԵ. դարու այդ երկու գլխաւոր վարդապետարաններում։ Փորձենք պարզելու Թովմայի դերը համազգային պատմութեան մէջ առաջնակարգ նշանակութիւն ունեցող այս երևութի մէջ։

Թովման առհասարակ շատ համեստ է իւր անձի մասին տուած տեղեկութիւններով. բայց նշաններից երևում է, որ նա շատ վաղ ժամանակներից տոգորուած էր Էջմիածնի նորոգութեան գաղափարով. Աղթամարի կաթուղիկոսները նրա աչքում դեռ ևս 1410 թուից ապստամբ են և «յերկիրն պգե՞աց» (Աւետեաց) մտնելու համազօր «ի մ՛արն՞ւի և ի հնազդութ՞ի գերադրական և ս՞ր աթոռոյն Գ՞րգրի Լուսաւորչին մերոյ» գալը**։ Պկե թուականի Ախալցխայի աւարից գնած «կոպողայի» մասին մտածում է, թէ «այս Էջմիածնին է պատշաճ և ոչ այլ եկեղեցեաց, և ինձ մահ ոչ տացէ Աստուած, մինչև բացեալ տեսից զդուռն Էջմիածնին»***։ Այդ թուականից նա երազներ է տեսնում Էջմիածնի նորոգութեան մասին և պատմում իւր միաբաններին, ապացոյց, թէ այդ շարժման հոգին Թովմա Մեծոփեցին էր։ Կիրակոս Բանասէրն էլ նոյնն է հաստատում. «Եւ հանապազ խնդրէր յԱստուծոյ, զի Էջմիածինն նորոգեսցի. կաթուղիկոս և թագաւոր նստցի յԷջմիածինն»†։ Թովման է առաջինը, որ Սսոյ չորս եպիսկոպոսներից նամակ է ստանում հայրապետական Աթոռի անկման նկարագրութեամբ և «սկիզբն արարեալ ողջունի նամակաց առ ամենայն ազգս, գալ

---

* Պատմ. 55 52. Նոր Նիւթեր. Ար. 755. (18)։ Թօփչեան. Յուցակ Ձեռագրաց Խաչիկ վարդ-ի. 1898. Վաղարշապատ. Ա. 97.

** Նոր Նիւթեր. Ար. 755. (18)։

*** Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատակարանը. 62։ Համ. Թովմ. Մեծ. Պատմ. 67/8.

† Նոր Նիւթեր. Ար. 745. (8)։